

կուլթեան տեսակետից, որովհետեւ նրանք, լինելով առանձնայատուկ մի երեւոյթ մեր հնագոյն մատենագրութեան, այնուհետեւ դարեր շարունակ մեծապէս ազդել են թէ հայ մտքի եւ թէ ոգեկան մշակոյթի վրայ:

§ 2. Յունարան ուղղութիւնը, նախ եւ առաջ, այն մեծ յեղաշրջումն է հին հայոց մատենագրութեան մէջ, որը հիմնայատակ է անում ու յեղափոխում թէ հայ գրական լեզուն, ոճը, գրելու եղանակն ու սովորութիւնը, եւ թէ հեղինակների գաղափարական ու գիտական պաշարն ու աշխարհայայեացքը: Վեցերորդ դարից սկսած՝ հայ մատենագիրներից շատերը, հմուտ ու քաջ ծանօթ լինելով քերդողական, քերականական, ճարտասանական եւ իմաստասիրական «արուեստներին», կոչւում են հռետոր, փիլիսոփայ կամ քերդող, որ յունարէն *πολιτης* բառի թարգմանութիւնն է:

«Քերդող» մակդիրը հանդիպում է արդէն վեցերորդ դարի վերջում: «Փառաւորեց տերանց վրթանիսի տերանց նուիրակի եւ վարդապետի քչկան որդւոյ, ի Սորմենայ ստրատելատե եւ հայոց զաւրավարէ» թղթում կաթողիկոսական տեղապահ վրթանէսն անուանում է «քերդող»: «Ձի եթէ չէր իշխան, որպէս գրեցէքն, տեղապահ ձեր եկեղեցւոյդ առանց աթոռակցաց իւրոց ասել ընդ մեզ եւ կամ լսել, եւ կամ որ ասէրդ ըրերդող, նստեալ ի Գուեսոյ, աւերածին հաւատոյդ նոր կարապետդ, եւ յառաջնթաց նեռին, պաճուճեալ անախառութեամբ ի մէջ ախմար եւ մտամոլար մարդկան, եւ ցուցանէ զանձն իւր թէ են իսկ իմ վարդապետութիւն, ապա պարտ է...» եւն (Գիրք թղթոց, էջ 90):

Ղազար Փարպեցին յիշում է Մովսէս «փիլիսոփոս»ին: Ստեփանոս Ասողկը «փիլիսոփայ» է անուանում քրիստոսփոր կաթողիկոսին, իսկ Եզրաս Անգեղացուն համարում է «աշակերտ ճարտասանին Մովսիսի եպիսկոպոսի Բագրեւանդ գաւառի» եւ ասում, որ նա «զգաստ ճարտասանիցն բազմացուցանէր» (Պատմ. տիեզեր., Ս. Պետերբուրգ 1885, էջ 81, 82):

Քերդողները եւ իմաստասէրներն են եղել, ինչպէս յայտնի է, այդ ժամանակուայ հեղինակաւոր գիտնականները: Վեցերորդ դարի կրօնական վեճերի ժամանակ սրանք են, գլխաւորապէս,

հիմնաւորել ու պատճառաբանել վեճերի հարցերը եւ հանդէս եկել եկեղեցական ժողովներում հակառակորդների դէմ: Սմբատ Վրկան մարզպանը վրաց Կիւրիոն կաթողիկոսին ուղղուած իր թղթում գրում է.

«Կամէք եպիսկոպոսունս հանդերձ քերդողաւք արձակել, զկիրթն գիտել զչարութիւն հերձուածոց, որ զձեզ ի վերայ հասուցանէին: Բայց ապա առ ժամս բաւական համարեցաք ի ձեռն ազատ արանցդ, նախ թղթով զկամս ձեր գիտել» (Գիրք թղթոց, էջ 169):

Եւ յիրաւի, քրիստոնէութեան հեղինակական պատճառով՝ անկարելի էր հասկանալ կրօնա-դաւանաբանական խնդիրների ու վեճերի իմաստն ու նրբութիւնները առանց ժամանակակից հեղին գիտութեան ու լմաստասիրութեան վարժ ծանօթութեան:

Յունարան հայ դպրոցն էր, որ այդ հմուտութիւնը պատուաստում ու տարածում էր հայ երկրում:

§ 3. «Արտաքին գրոց» Թարգմանութիւններէ եւ նշանց աղբեղութիւնը հայոց հին մատենագրութեան լեզուի, ոճի եւ բովանդակութեան վրայ: — Բովանդակութեան կողմից հայ մատենագրութիւնը յունարան շրջանում հարստանում է բազմաթիւ թարգմանութիւններով յունարէնից՝ ոչ միայն կրօնական երկերի, այլ եւ ոչ կրօնական, որոնց մեծագոյն մասը յայտնի են «արտաքինք»՝ «արտաքին գրեանք» եւ «գիրք արտաքինց իմաստասիրաց» անունների տակ: Յունարան այս շրջանում միայն հայ միտքը ծանօթանում է հեղինական — հեթանոս գիտութիւնների զանազան ձիւղերի հետ եւ Արիստոտելի տրամաբանական երկերի ու Նորպղատոնական փիլիսոփայութեան ուսումնասիրութեամբ վարժւում է վերացողական մտածողութեան: Բացի Արիստոտելի երկերից ու մեկնութիւններից՝ նոյն այս շրջանում թարգմանուած են «Պիտոյից գիրքը»՝ Դիոնիսիոս Թրակացու քերականութիւնը, «Նոնոսի» Ժողովարանք պատմութեանց առասպելալացն, եւ ուրիշ երկեր հեղինական աշխարհիկ գրականութիւնից:

Թարգմանութիւնների մի մասը կատարուած է տառացի բառ առ բառ փոխադրութեան միջոցով, որը վեցերորդ դարում գործածական է եղել Բիւզանդիայում: Ինչպէս յայտնի է, նոյն այդ եղանակով թարգմանուած է յունարէնի Յուստինիան Կայսեր օրէնքների ժողովածուն: Ըստ երեւոյթին, նիւթական տառացի փոխադրութեան եղանակը յատուկ պահանջ է

“Եւ արդ ներգործող ի միտս երեւիւր առ խորհուրդս փողարին

Մեծողւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի
իւր ներածեալ կողարաղ նաեւ ողջամիտ
աշխարհածուհի”¹:

§ 5. “Արդեւ ինչո՞ւ, Բարապետը աշխարհաբար հայերէնի մէջ է նա առաջադրուածին հարեւորութիւնը հայոց լեզուի պարսկական տեղափոխութեան համար: — Յունարան դպրոցի արտագրութիւնների շարքում առանձնայատուկ տեղ են բռնում Արիստոտելի իմաստասիրական երկերի եւ նրանց մեկնութիւնների, նաեւ “Պիտոյից գրքի” ու Գիոնիսիոս Թրակացու քերականութեան հայերէն թարգմանութիւնները: Այս երկերը դարեր շարունակ եղել են Հայաստանում դպրոցական դասաւանդման առարկաներ եւ սրանց լուսաբանութեանը, ինչպէս յայտնի է, նուիրուած են բազմաթիւ մեկնութիւններ ու լուծմունքներ, որոնք զանազան ժամանակներում յօրինուած են եղել, իրերեւ դպրոցական ձեռնարկներ: Քերականական, ճարտասանական ու Արիստոտելի իմաստասիրական երկերի յարատեւ ու խոր ազդեցութիւնը համաշխարհային մշակութիւն, լեզուի ու մատենագրութեան վրայ համատարած մի երեւոյթ է եղել թէ Արեւմուտքում եւ թէ Առաջաւոր Ասիայում:

Այն գիտական ու վերացական բառերի պաշարը, որ գործածական է ու սովորական այժմեան աշխարհաբար հայերէնում, ինչպէս եւ եւրոպական լեզուներում, ծագել է մասամբ վերոյիշեալ երկերի թարգմանութիւններից:

Յունարան գրաբարը, համարելով ոսկեդարեանի համեմատութեամբ “ցեխագարեան”, չպէտք է այնու ամենայնիւ մոռանալ, որ այդ լեզուի գիտական քննութեամբ միայն կարող են պարզուել լեզուական մի շարք խնդիրներ, որ վերաբերում են նրանից ծնունդ առած միջնադարեան եւ աշխարհաբար հայերէնին: Յունարան այդ լեզուի ուսումնասիրութեամբ է, որ հնարաւոր պիտի լինի լուսաբանել մեր լեզուի յաջորդական զարգացումը: Գիտական այդպիսի ուսումնասիրութիւններ, դժբախտաբար, շատ քիչ կան, մինչդեռ դրանք են հիմք ծառայելու հայոց լեզուի պատմական քերականութեան՝ հայ լեզուագիտութեան յատուկ մի ճիւղի, որ գեո-եւս գոյութիւն իսկ չունի:

Թէ որքան հետաքրքիր կարող են լինել

եւ կարեւոր լեզուագիտական այդ աշխատութիւնները՝ ցոյց տանք մի օրինակով:

Հայերէնում կան բարդ բառեր, որոնք տարբեր եղանակով են բարդուած, ինչպէս՝ մայրաքաղաք եւ քաղաքամայր, բանաստեղծութիւն եւ ստեղծաբանութիւն, սիրագործ եւ գործասէր, սիրաբան եւ բանասէր, բանագովութիւն եւ գովաբանութիւն, վաճառաշահութիւն եւ շահավաճողութիւն եւն: Մեծագոյն մասն այս բառերի յունարան ծագում ունին:

Արդ՝ հարց է առաջ գալիս, թէ այդ բարդութիւններից որոնք են աւելի հարազատ հայոց լեզուի քերականութեանն ու ոգուն: Ահա մի հարց, որը հայոց լեզուի պատմական քերականութեան խնդիրներից մէկն է լինելու, բայց ուշադրութեան գրեթէ չէ առնուած:

Վերոյիշեալ օրինակներից “սիրագործ” բարդութիւնը, որ գործ է ածուած Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան մէջ (էջ 325), ամենայն հաւանութեամբ, թարգմանութիւն է յունարէն φιλεργος բառի: Յունարան ուրիշ երկերում նոյն բառը, սովորաբար, թարգմանուած է “գործասէր”: Շատ պարզ է, որ “գործասէր”-ն աւելի է համապատասխանում հայերէն լեզուի ոգուն, քան “սիրագործ”-ը: Սակայն կան դէպքեր, երբ յունարան բարդ բառերի հարազատութիւնն ու խորթութիւնն աւելի դժուար է լուծուում, քան վերեւ մատնանշուած դէպքում: Օրինակ, “մայրաքաղաք” բառը, որ թարգմանութիւն է յունարէն μητροπολις բառի, այժմ միանգամայն հարազատ է հնչում մեր ականջին: Բայց ուղիղ է արդեօք մեր այդ ներքին զգացումը եւ վստահութիւնը: Քերականական ու լեզուաբանական տեսակէտից, ինչ թուում է, որ հայոց լեզուի ոգուն աւելի է համապատասխանում ո՛չ թէ սովորական դարձած “մայրաքաղաք”-ը, որն արդիւնք է յունարան տառացի թարգմանութեան, այլ “քաղաքամայր” բառը:

Յատուկ ուսումնասիրութեան նիւթ կարող է ծառայել յունարան բարդ բառերի հենց այս կարեւոր խնդիրը, մանաւանդ, եթէ ի նկատի առնուեն Եւագր Պոնտացու երկերի հնագոյն հայ թարգմանութիւնները, որ ունեն այդ տեսակէտից հետաքրքիր առանձնայատուկութիւններ:

Թէ այս եւ թէ ուրիշ նման լեզուական խնդիրներ կարող են եւ պէտք է պարզուեն յունարան հայերէնի ուսումնասիրութեամբ:

Երեւան:

ՊՐՈՓ. Յ. ՄԱՆԱՆԻԱՆ

(Շարունակելի:)

¹ Տե՛ս Ն. Աբունց, Արուեստ Գիտելու քերականի, Դեպքագ. 1915, էջ 128—129: